ՀԿԴ/0036/02/22
ԵԴ/37811/02/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 նոյեմբերի 2022 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ՀԿԴ/0036/02/22 (ԵԴ/37811/02/19) քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2018 թվականի հունվարի 8-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

2. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունվարի 10-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ (գործ թիվ ԵԱՆԴ/0006/02/18):

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ թիվ ԵԱՆԴ/0006/02/18 քաղաքացիական գործի վարույթից առանձնացվել է 2014 թվականի ապրիլի 26-ին կնքված թիվ ՇՀԱՊՁԲ-7/22-1 պայմանագրի հիման վրա գումարի բռնագանձման պահանջը (գործ թիվ ԵԴ/37811/02/19):

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ թիվ ԵԴ/37811/02/19 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նույն դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 2-ի վճռով հայցը բավարարվել է:

5. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ թիվ ԵԴ/37811/02/19 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 2-ի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է:

6. ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 2022 թվականի մարտի 23-ի որոշմամբ «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

7. Թիվ ԵԴ/37811/02/19 քաղաքացիական գործը 2022 թվականի ապրիլի 20-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Տաշչյանին:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան)՝ 2022 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ թիվ ԵԴ/37811/02/19 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

9. Դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ քաղաքացիական գործը հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

10. 2022 թվականի նոյեմբերի 10-ին թիվ ԵԴ/37811/02/19 քաղաքացիական գործը ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, որին շնորհվել է ՀԿԴ/0036/02/22 համարը:

11. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

12. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները</u>.

13. 2018 թվականի հունվարի 8-ին դիմելով դատարան՝ Հայցվորը ներկայացրել է գումարի բռնագանձման պահանջ: Համաձայն ներկայացված հայցադիմումի՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության միջև կնքվել են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/28-3, ՇՀԱՊՁԲ-7/22-1, ՇՀԱՊՁԲ-7/8-9, ՇՀԱՊՁԲ-7/47-1, ՇՀԱՊՁԲ-7/17-1, ՇՀԱՊՁԲ-7/26-4, ՇՀԱՊՁԲ-7/45-1 պայմանագրերը: Մատակարարված ապրանքների ընդհանուր գումարը կազմել է 889.653.224 ՀՀ դրամ, որի դիմաց Պատասխանողը վճարել է 860.780.653 ՀՀ դրամ: Արդյունքում Հայցվորի կողմից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 29.653.841 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջ[1]:

14. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ սույն գործով ներկայացված պահանջի քննությունն անխուսափելիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության գույքային շահերին[2]:

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1, թերթեր 4-9:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 6, թերթեր 86-87:

15. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 24-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 41-րդ հոդվածի 1-ին մասին՝ Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(...) «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության դեմ ներկայացված հայցապահանջը չի կարող որակվել որպես պետության գույքային շահի պաշտպանության վերաբերյալ հայց և ըստ այդմ՝ ենթակա չէ քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանում հետևյալ պատճառաբանությամբ.*

ա) ներկայացված հայցապահանջով հայցի օբյեկտը ոչ թե պետության գույքային շահն է, այլ մասնավոր անձին՝ ենթադրաբար վճարվելիք դրամական գումարը,

բ) ներկայացված հայցապահանջով հայցի առարկան ոչ թե պետության գույքային շահի պաշտպանության պահանջն է, այլ մասնավոր անձի գույքային իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվել է պետական մարմնից հօգուտ վերջինիս գումարի բռնագանձման պահանջ դատարան ներկայացնելու միջոցով,

գ) հայցապահանջը ներկայացված է ոչ թե դատախազության, այլ իրավաբանական անձի կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ, անկախ այն հանգամանքից, որ սույն գործով անուղղակիորեն կարող է շոշափվել պետության գույքային շահը, Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցապահանջը պետության գույքային շահի պաշտպանության վերաբերյալ հայց չէ, ենթակա չէ քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, հետևաբար բացակայել է գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին հանձնելու ենթակայության նախապայմանը»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

[3] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 6, թերթեր 95-102:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0036/02/22 (ԵԴ/37811/02/19) քաղաքացիական գործն ըստ հայցի «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

17. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝(...) հակակոռուպցիոն դատարանը»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (...) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (այսուհետ՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր)»:*

18. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ հակակոռուպցիոն դատարանին ենթակա քաղաքացիական գործերն են՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը: Նշվածը հիմք է տալիս փաստելու, որ օրենսդիրը հակակոռուպցիոն դատարանի ենթակայությանն է վերապահել ոչ թե այն գործերը, որոնք **առնչվում են պետության գույքային և ոչ գույքային շահերին**, այլ այն հայցերով գործերը, որոնք **ուղղված են այդ շահերի պաշտպանությանը:** Այսինքն՝ հակակոռուպցիոն դատարանի ենթակայական իրավազորությունը սահմանափակված է **պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերի** քննությամբ: Հարկ է նաև նշել, որ այս մոտեցումը բխում է 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներից, համաձայն որոնց, օրենսդիրը

հակակոռուպցիոն դատարանին օժտել է մասնագիտացված դատարանի կարգավիճակով և ըստ այդմ՝ նախատեսել այդ դատարանի քննությանը ենթակա քաղաքացիաիրավական վեճերի սահմանափակ շրջանակ[4]:

19. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- 2018 թվականի հունվարի 8-ին «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերությունը հայց է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին[5], համաձայն որի՝ «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքվել են վերջինիս կարիքների համար ապրանքի գնման թիվ ՇՀԱՊՁԲ-7/28-3, ՇՀԱՊՁԲ-7/22-1, ՇՀԱՊՁԲ-7/8-9, ՇՀԱՊՁԲ-7/47-1, ՇՀԱՊՁԲ-7/17-1, ՇՀԱՊՁԲ-7/26-4, ՇՀԱՊՁԲ-7/45-1 պայմանագրերը: Մատակարարված ապրանքների ընդհանուր գումարը կազմել է 889.653.224 ՀՀ դրամ, որի դիմաց Պատասխանողը վճարել է 860.780.653 ՀՀ դրամ: Արդյունքում Հայցվորի կողմից դատարան է ներկայացվել 29.653.841 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջ[6],

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ սույն գործով ներկայացված պահանջի քննությունն անխուսափելիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության գույքային շահերին[7],

---

[4] Տե՛ս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի հիմնավորումները՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draftreading_docs7/K-785_DR2.pdf

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

[6] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

[7] Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 24-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 41-րդ հոդվածի 1-ին մասին, Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ նշելով, որ անկախ այն հանգամանքից, որ տվյալ գործով անուղղակիորեն կարող է շոշափվել պետության գույքային շահը, ներկայացված հայցապահանջը պետության գույքային շահի պաշտպանության վերաբերյալ հայց չէ և ենթակա չէ քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանում[8]:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 17-18-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է նկատել, որ սույն գործով Հայցվորը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Այսինքն՝ հայցադիմումի առարկան կազմում է Հայցվորի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված պահանջը, որը թեև կարող է առնչվել նաև պետության գույքային և ոչ գույքային շահերին, սակայն միտված չէ վերջինիս պաշտպանությանը: Այլ կերպ, հայցադիմումի առարկան չի հետապնդում հանրային շահի պաշտպանության նպատակ, որն օրենսդրի կողմից նախատեսվել է որպես ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից գործերի քննության նախապայման:

Հետևաբար, ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0036/02/22 (ԵԴ/37811/02/19) քաղաքացիական գործը՝ ըստ հայցի «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

21. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0036/02/22 (ԵԴ/37811/02/19) քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

---

[8] Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՀԿԴ/0036/02/22 (ԵԴ/37811/02/19) քաղաքացիական գործն ըստ հայցի «Հանեշ Գրուպ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ